

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԼԱԳԵՏԵԱՆ Հ. Գ. — Քրիստոսեական
Հարտարապետութիւն (պատմական հետա- 449
գոտութիւններ)

Թորոսեան Տոբ. Վ. — Հայ բժշկական
արձանագրութիւն 460

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ԽՄԲ. — Հայ արուեստագէտ մը՝ Յ. Աճե- 465
մեան

Մոսթաֆեան Զարեհ. — Չինական ոգին
արուեստին մէջ 476

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Վ. ԱՍՏԱՆ. — Եղեւինի տակ. (թրգմ. 481
Հ. Վ. ՅԱՎԱՆԵՍԵԱՆ)

ԳՐԱԿԱՆ

ՓԷՅԻԿԱՆ Հ. Ե. — Գամառ Քաթիկա և
Մ. Նալբանդեան (իրենց հարկարմանակին
տոթիթով) 484

ՓԷՅԻԿԱՆ Հ. Ե. — Ընծայում (թերթ.) 490
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. Վ. — Տեսիլքիդ առ- 491
ջեւ (թերթում)

ՀԱՅՅԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՔԱՐԹՈՆ ՏԷ ՎԻՍԲ. — Բոցի պահպան- 492
ները (թրգմ.)

ԽՄԲ. — Տիար Գալուստ Կիւլպէնկեան
Նախագահ Հ. Բ. Ը. Մ. 495

ԱՅԼԵՒԱՅԼԳ

ՓԷՅԻԿԱՆ Հ. Ե. — Պոլկար և Խոալ
արքունեաց խնամութիւնը 455

ԽՄԲ. — Հանգիստ հոգւոյ Հ. Ա. Վ. Ի
Գազէզ՝ Ընդհ. Աթոռակալի Միւրթ. Ուխտ. 496

PHILOLOGIE

Nahabédian P. G. — L'Architecture
des églises (recherches historiques) . 449

Torkomian Doct. V. — Epigraphie
médicale arménienne 460

BEAUX ARTS

Réd. — Un artiste arménien: H. Adjé-
mian 465

Moutafian Zaréh. — L'esprit chinois
dans l'art. 476

PHILOSOPHIE

Alichan P. L. — Sous le Cèdre (trad.
P. V. H.) 481

LITTÉRATURE

Paitchikian P. Elie. — Kamar Katiba
et M. Nalbandian 484

Paitchikian P. Elie. — Présentation
(de la Ste Vierge) (poésie) 490

Horhannessian P. V. — Devant ta
vision (poésie). 491

ECHOS d'ARMÉNIE

Carton de Wiart. — Les gardiens de
la flamme 492

Réd. — M. K. Gulbéghian Président
de l'Union Gén. Arménienne de bienfai- 495
sance

DIVERS

Paitchikian P. Elie. — Alliance entre
la Cour de Bulgarie et d'Italie 455

Réd. — Décès du R. P. Avédik Ka-
zéz, Vicaire Gén. de la Congr. Mékith. 496

◆ ԿԱՐԵՒՈՐ ◆

Օրէ օր Թախանձագին դիմումներ կը հասնին Խմբագրութեան ազգային շատ մը հաստա-
տութիւններէ և ուսումնասէրներէ՝ ձրի բազմազէպ ստանալու. մեզի ցաւ է չկարենալ զոհացում
տալ անոնց՝ արդի նեզ պայմաններուն մէջ: Այսու կող կ'ուզուի հայ ունեւորին խնդրով իր
լուծման ի նպաստ զբասէր կարօտեալին, ի նպաստ հայ մշակոյթին: Պիտի չմոռնանք հրատարակել
հանդէսիս մէջ ըարեօիրտ նուիրատուներու անունները: ԽՄԲ. ԲԱՅՄԱԿԳԻ

1. ՈՅՍ ՏԵՍԱՆ

ՎԵՆԵՏԿՈՅ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԷՆ

ՀԱՅ ԴՐՕՇՆԵՐԸ

ՊՍՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԳՐԵՑ

Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ

Ե ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Էջ 112 Գին՝ Ֆր. 2. 1.)

Հ. ՄԱՆՈՒԻԼ ԹԱՇԿԵԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ ԳՍԱԸՆԹԱՅՔ

Ա. ՏԱՐԻ

ՏԱՐՐԱԿԱՆ ԵՐՁԱՆ

(Էջ 64 Գին՝ Ֆր. 2. 1.50)

ԱՐԳԻ ԵԹՈՎՊԻԱՆ

ԵՒ

ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

ՀԱՅԵՐԷՆԷ-ՀԱՊԷՇԵՐԷՆ

ԳՈՐԾԱՄԱԿԱՆ ԲԱԹԵՐՈՒ ՑԱԽԵՂՈՒՄՈՎ

ԳՐԵՑ՝ ՀԱՅԿ ԲԱԹԱԲԱՆ

Ազգապրանքներու համար գինել

Haig Patapan

Addis - Abeba

(Abyssinie)

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՁԵԹՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊՍՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԳՐԵՑ

Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ

(Էջ 204 Գին՝ Ֆր. 2. 2)

ՕՐԱՑՈՅՑ

ԵՒ

ԳՈՒՇԱԿ ՕԴՈՑ

1931

Թուականին Գրիստոսի ըստ Նոր

Տոմարի ճՂԵ (175րդ) տարի

(Գին թղթակազմ Ֆր. 2. 0.40)

ՄԵՄՐՈՎՊ. Յ. ՍԵԹԵԱՆ - (Ի ԿԱԼԿԱԹԱ)

ԿՕՐԿԻՆ ԽԱՆ

ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐԸ

ԵՒ

ԳԼԽԱԽՈՐ ՀՐՄԱՆՈՍԱՐԸ

ՆԱՎԱՊ ՄԻՐ ԳԱՍԻՄԻ

ՊԷՆԿԱԼԻ ՄԷՋ

1760 - 1763

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԱՆԳԼԻԵՐԷՆԷ

ՏՐԿ. ՍՐԲՎԱՐԳ ՄԿԻՏՐԶԵԱՆ

(Էջ 39 Գին՝ Ֆր. 2. 1.50)

Հ. Բ. ԸՄՒՈՒԹԵԱՆ

ԶԵԿՈՅՑ

Տ. ԳԱԼՈՒՍՏ ԿԻՆԼՊԵՆԿԵԱՆ

ՄԻՍՁԱՅՆՈՒԹԵԱՄԲ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՈՒՄԾ

Կեզր. Վարչ. Ժողովը, նախագահութեամբ փոխ-ատենապետ Տիգրան Խան Քէլէկեանի և մասնակցութեամբ Ամերիկայի ԵՐՂ. Յանձնաժողովի ատենապետ Տ. Արշակ Գարակէօզեանի, իր Հոկտեմբեր 22ի հանդիսարար նիստին մէջ, համաձայն Հիմնական կանոնագրին ձեռնարկեց Միութեանս յաւէտ ողբացեալ Հիմնադիր-Նախագահ Պօղոս Նուպար փայլայի յաշորդին ընտրութեանս ինչպէս յայտնի է, այն սրտագին ու խորագգած վշտակրութեան մէջ, զոր պատճառած էր Մեծ Հայուն անհետացումը, կեզր. Վարչ. Ժողովի անդամները փափաք յայտնած էին անորոշ ժամանակ մը յետագգել այդ օրինական գործողութիւնը: Թէ և ժամանակը կարող չէ ամփքել ազգային այս մեծ կորուստին ցաւը, բայց Միութեան գերագոյն շահերուն ծառայելու պարտականութիւնը, զոր անգուցական Բարերարը իր գեղեցիկ օրինակովն իսկ նուիրագործեց, մինչև իր վերջին շունչը ցոյց տալով զմայլելի նուիրում մը, թոյլ չէր տար աւելի եւս ուշացնել նախագահին մը ընտրութեան այլևս անհրաժեշտ դարձած գործը:

Ուստի, կեզր. Վարչ. Ժողովը, Երաւասագիտութեան զգացումով մը ոգեկոչեց այն հոյակապ ծառայութիւնները զոր հայ Ժողովուրդին և մասնաւորաբար Հ. Բ. Ը. Միութեան մատուցած է Պ. Նուպար Փայա, որուն յիշատակը միշտ կենդանի պիտի մնայ այս օրուան և վաղուան Հայերուն մէջ: Կեզր. Վարչ. Ժողովը նկատի ունեցաւ նաեւ որ մեր ազգին ենթարկուած բազմազան թշուառութեանց մեղմացումէն վերջ, Հ. Բ. Ը. Միութիւնը պիտի կոչուի ազգային վերածնունդին հետ սերտօրէն կապուած նոր խնդիրները լուծելու, և այդ պատճառաւ իր գործողութեան դաշտը զգալաւոր պիտի լայնեայ, որով և այդպիսի ծրագրի մը իրագործումը, ինչպէս նախատեսուած է 1 և 15 Ցօղուածներուն մէջ, կը պահանջէ որ կեզր. Վարչ. Ժողովի գլուխը գտնուի անձնաւորութիւն մը որուն գործունէութիւնը, անձնուիրութիւնը և ձեռնհասութիւնը յայտնի ըլլան:

Այդ նկատուածներով կեզր. Ժողովը հաստատեց որ իր անդուգական Հիմնադիր-Նախագահին արժանաւորապէս յաշորդելու և Միութիւնը բարեբաստիկ հանգրուաններ առաջնորդելու համար, ոչ ոք աւելի որակուած է քան Տ. Գալուստ Կիւլպէնկեան որ, իր բարձր իմացականութեամբ, իր զօրաւոր անհատականութեամբ և իր բեղուն գործունէութեամբ, տիեզերական համբաւ կը վայելէ:

Ըստ այնմ, նախ և առաջ, կեզր. Վարչ. Ժողովը, տասնըհինգ անգամներու միաձայն քուէ-ներովը և խանդավառութեամբ, Տ. Գալուստ Կիւլպէնկեանը ընտրեց Վարիչ-անգամ, և յետոյ, իր անդամակցութեան հաւատարմութեամբ անկեղծ հանդիմով արձանագրելով վերջ, առանձին ընտրութեամբ եւս զինքը նախագահութեան բարձր պաշտօնին կոչեց, միաձայնութեամբ, որոշելով պատուիրակութեամբ մը տոյն ընտրութիւնները հաջորդել նորընտիր մեծայարգ Նախագահին:

Այս առթիւ, կեզր. Վարչ. Ժողովին հաջորդեալ էին բազմաթիւ հեռագիրներ և համակներ, Միութեան Երջմանակային Յանձնաժողովներուն, Տեղ. Մասնաժողովներուն և ականաւոր Անգա-մներուն կողմէ, որոնցմով միահամուռ բազմաթիւ կը յայտնուէր մեր Ընկերութեան գլուխը տեսնել Տ. Գալուստ Կիւլպէնկեան:

Ժողովը ցրուելէ առաջ, սրբազան պարտականութիւն մը կատարեց ղէպի անմոռաց յիշատակը Պօղոս Նուպար Փայայի, քանի մը վայրկեան յոտնկայս ամփոփուելով գերագոյն յարգանքի խոր զգացումի մը մէջ:

Ամէն տարակոյտէ վեր է թէ այս բարեպատեհ ընտրութիւնը, որ մեր սիրելի Միութեան համար յուսալից թուական մը կը բառայ, շերմագին գոհունակութեամբ պիտի ողջունուի Միութեան բոլոր անդամներուն և առհասարակ ամբողջ ազգին կողմէ, որ իրաւամբ Տ. Գալուստ Կիւլպէնկեանի մէջ կը տեսնէ իմաստուն, կորովի և անձնուր գեկալաւ մը: